

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԲՆՈՒԹԵԱՆ ԱԻԵՐՈՒՄԸ ԱՆԳՐԱՎԿԱՍՈՒՄ,
ՅԵՏԿԵՂԻՍ ՀԵՅԵՍՏԵՆՈՒՄ

(Տեսութիւն Անտառների ոչնչացման առթիւ:)

Ա.

Ամէն տեղ, ուր բնութեան շահագործման հետ չէ զուգընթացում եւ նրա պաշտպանութիւնը, նա աւերում է, շատ անգամ այլ եւս անուղղելի կերպով: Բայց ոչ մի տեղ այս անօխտելի ճշմարտութեան զանցառութիւնը չի տուել այնպիսի զարհուրելի հետեւանքներ, ինչպէս Անդրկովկասում՝ շնորհիւ երկրի մակերեւոյթի կազմի:

Անդրկովկասի, առանձնապէս Հայաստանի բազմաթիւ շրջաններում գոյացել են եւ շարունակում են գոյանալ աննպատակներ, որոնք ընդ գրկելով լեռները իջնում են ձորերը եւ հովիտները՝ շնորհիւ անտառների անգուսպ եւ անխնայ ոչնչացման: Եւ այս կատարւում է մի երկրում, ուր աղգաբնակչութիւնը տանջւում է սակաւահողութիւնից:

Դարերի ընթացքում երկրագործութիւնը զարգանալով եւ ի հաշիւ անտառների, քշել էր վերջ ներքը՝ հովիտները եւ ձորերը շրջապատող լեռների կողերը: Եւ մինչեւ Ռուսաց տիրապետութեան սկիզբները՝ Կովկասի եւ Անդրկովկասի լեռների մեծագոյն մասի գօտին ծածկուած էր խիտ անտառներով: Անտառային բուսականութիւնը համեմատաբար նուազ էր Հայաստանում՝ նրա կոնտինենտալ (ցամաքային) կլիմայի պատճառաւ: Սակայն միայն համեմատաբար, որովհետեւ հայկական անտառը խոշոր տարածութիւն ունէր բռնած, չհաշուած նրա շրջադաւառները՝ Ղարաբաղը, Ղազախի եւ Գանձակի գաւառները եւ Լոռին, այն է հին Արձախը, Գարգմանը եւ Տաշիրը, ըրորնք լինելով միեւնոյն կլիմայի ենթակայ, ինչպէս Վրաստանը,

վերջինիս նման ծածկուած էին խիտ անտառներով, որոնց զգալի մասը դեռ գոյութիւն ունի՝ յատկապէս դժուարամտեղ՝ լեռների կողերին, սակայն կրկին տեղ տեղ սաստիկ աւերուած: Այս տեսակէտից սուկալ տեսարան է ներկայացնում զեղեցկագոյնը հայ գաւառներից մի ժամանակ ամբողջովին անտառապատ Լոռին:

Բնութեան գաղտնիք է, թէ ինչպէս անտառային բուսականութիւն էր առաջ եկել եւ զօրացել այնպիսի մի կոնտինենտալ երկրամասում, որպիսին է կենդրոնական Հայաստանը (նախկին Երեւանեան նահանգը): Այս նահանգի՝ Նախիջևան, Դարաղեալ գաւառների լեռների լանջերը վերջիշեալ ժամանակ զգալի մասով դեռ ծածկուած էին անտառներով: Նոյն իսկ Երեւանեան գաւառի այժմ կատարեալ անապատ լեռնակողերը զուրկ չէին այդ բուսականութիւնից, որը ծածկում էր Վեդի եւ Դառնի գետերի վերին հովիտները, Դեղարդայ վանքը շրջապատող սրակող հսկայ լեռները եւ անդնդանման ձորերը:

Արագածի հարաւ-արեւելեան հսկայ փեշը, բնութեան մի դաժան տեսարան, տեղ տեղ իւր վերայ ունէր անտառի մնացորդներն: Յարութիւն Արարատեանը 17 երորդ դարի իննսունական թուականներին նկարագրում է Բիւրականի ձորը եւ նրա շրջակայքը իբրեւ մի խիտ անտառ, որի հազուադիւրս եւ օր ըստ օրէ անհետացող մնացորդները դեռ նկատելի են:

Իսկ Ապարանի եւ Դարաչիշաղի մէջ ընկած հսկայ լեռնախմբերը, Ապարանի հարաւային սահմանը բռնած Արայի լեռը՝ մինչեւ ալպեան մասերը ծածկուած էին ընդարձակ անտառներով:

Մանաւանդ աչքի էր ընկնում իւր ճոխ անտառներով Բամբակի գաւառը, ուր ծառերի բոլոր տեսակները հասնում էին նոյն մեծութեան, ինչպէս Լոռում եւ Վրաստանում:

Զանգեզուրի ընդարձակ եւ անօրինակ լեռնոտ գաւառը, ուր անտառների դեռ

խոշոր մնացորդներ կան, ներկայացնում էր մի վերին աստիճանի անտառախիտ երկիր:

Այն օրուանից, երբ ոռոսաց տիրապետութեան շնորհիւ խաղաղուեց Անդրկովկաս եւ ժողովրդի աճեցողութիւնը ապահովուեց եւ տեղ տեղ նրա թիւը աւելացաւ արտաքուստ դաղթականութեամբ, ինչպէս Հայաստանում, բնութեան օգտագործումը մեծ թափ առաւ, որը գնալով անընդհատ ուժեղացաւ: Բայց որովհետեւ բնութեան պաշտպանութեան զիտակցութիւնը կատարելապէս բացակայում էր ազգաբնակչութեան մէջ եւ բացակայում է ու այժմ, սկսուեց անտառների անխնայ ոչնչացումը, որը տեսնում է մինչեւ օրս իւր բոլոր վարչութիւնների հետեւանքներով:

Հինելով ինքն ըստ ինքեան տնտեսութեան կարեւորագոյն տարրերից մէկը, կովկասեան անտառը միաժամանակ ինչպէս զօտի պաշտպանում էր (պաշտպանում է ուր դեռ կայ) լեռները քայքայումից, պաշտպանում էր նոյն վիճակից նրանց ստորոտներում գտնուող ձորերը եւ հովիտները, որոնցում պարտակուած է զիւղատնտեսութիւնը: Միւս կողմից ինչպէս սպունդ ծծելով բոլոր թափուող հեղուկը՝ անձրեւը եւ ձիւնը, ապահովում էր աղբիւրների առատութիւնը, շատ անգամ նոյն իսկ գոյութիւնը: Հետեւաբար եւ ոռոգող ջրի քանակը, որից կախուած է երկրի կարեւոր մասերի տնտեսութիւնը Անդրկովկասում՝ անմիջապէս կապ ունի անտառների վիճակի հետ:

Ամենայն տեսակէտից այդ թանկագին զօտին՝ վաղուց արդէն պատառոտուած է եւ շատ տեղերում միանգամայն ոչնչացրուած: Արդէն բազմաթիւ են աւերուած լեռները եւ ձորերը: Արդէն վաղուց չի կարելի կովկասեան անտառը «մութ անտառ» անուանել. այլ եւս «մալլ թաւիժը չէ որ պատել է նրան», ըստ Կոլցովի գեղեցիկ նկարագրութեան, այլ մահուան տագնապը:

Թէեւ պետութիւնը իւր ժամանակին մեծեց անտառային վարչութիւն, կազմուեցին անտառապետութիւններ՝ մեծ մասամբ ըստ բնական սահմանների, բայց այդ վարչութիւնը անգոր հանդիսացաւ անտառների ոչնչացման եւ ընդ նմին երկրի աւերման առաջն առնել: Նախ որ անտառապետները երկար ժամանակ ըստ կրթութեան եւ ըստ որակի ցանկալի բարձրութեան վերայ չէին կանգնած եւ անտառներ ի վերայ նայում էին միմիայն իբրեւ պետական հասոյթի աղբիւրի, ոչ սակաւ դէպքերում գողերն թաց եւ իբրեւ անձնական, իսկ երկրորդ, որ ամենադժուարն է, անտառի անմիջական հսկիչները — անտառապահները, որոնց անտառապետները ընտրում էին տեղական ազգաբնակչութիւնից, անզիտակցութեան կողմից վեր չլինելով ջրապատից, ձգտում էին միայն մի բանի՝ շահագործելու անտառը յօգուտ իրենց:

Դնալով անտառապետների կազմի որակը բարձրացաւ, պետութիւնը սկսեց ըմբռնել անտառների սպառնական վիճակը: Անտառապետութեան էին հրաւիրուում, չնչին բացառութիւններով, միմիայն բարձրագոյն մասնագիտական կրթութիւն ստացած անձինք: Սակայն անտառի ոչնչացման թափը չթուլացաւ շնորհիւ այն տխուր հանգամանքի, որ անտառը ջրապատող ազգաբնակչութիւնը շարունակում էր մնալ նոյն մտաւոր մակարդակի վերայ, նոյնպէս անզիտակց ինչպէս սկզբանէ հետէ: Դադտնի կամ անտառապահների զիտութեամբ եւ մասնակցութեամբ շարունակում էր, շարունակում է եւ այժմ միեւնոյն աւերիչ գերը անտառների վերաբերմամբ, առանց մի վայրկեան տատաշուելու հետեւանքների առաջ: Չարիքը սոսկալի է մանաւանդ նրանով, որ չի սահմանափակուում եղած ծառաստանի ոչնչացմամբ, այլ վտանգում է եւ անտառի վերանորոգման հնարաւորութիւնը: Որովհետեւ անտառը խուժող գիւղական հօ-

տերը ոչնչացնում են շիւերը եւ նոր ծիւլերը. իսկ անտառասակաւ վայրերում ծառերը կտրելուց յետոյ՝ զիւղացին հետապնդում է նրանց նոյն իսկ դեռ կանանչ կոճղերը եւ արմատները:

Սակայն անտառը, մանաւանդ Կովկասում, մեռնում է ինչպէս Սամսոնը, պատժելով իւր դահիճներին: Երբեք հատուցումը այնպէս չէ հետապնդում յանցաւորին, ինչպէս այն դէպքերում, երբ յանցանքը գործւում է բնութեան դէմ: Անտառի ոչնչացումից յետոյ այլ եւս անձրեւը ամբողջովին գետին չի ծծւում, քերում է լեռան երեսի հողը, մերկացնում է քարը եւ աւազը, արագ հեղեղներ է կազմում, որոնք աւերելով լեռը, նրա բեկորների տակ թաղում են ստորտում գտնուող մշակուած դաշտերը եւ մարգագետինները: Սակաւադէպ չեն եւ լեռան շերտերի տեղաւաւթիւնները:

Այժմ Անդրկովկասում, մանաւանդ Հայաստանում բազմաթիւ են լեռներ, որոնք սոսկալի տեսարան են ներկայացնում իրենց կողերի ամայութեամբ եւ աւերներով եւ սպառնում են ազդարնակութեան նոր նոր արհաւիրքներով:

Թէ ինչ թափով է զարգանում երկրի աւերման գործը Անդրկովկասում, իբրեւ ահազանդ օրինակ կարոյ է ծառայել Դարաչիչագի անտառապետութեան վիճակը Երեւանեան նահանգում: 1895 թուին ըստ նախարարութեան կարգադրութեան՝ երկրաչափական գործիքներով այդ անտառապետութեան քարտէզը կազմելու, անտառի տարածութիւնը եղաւ 13117 դեսեատին (արտաւար), նոյն գործողութիւնը կրկնելու 1912 թուին, անտառը կազմում էր արդէն միայն 5400 դեսեատին: Այսինքն 16 տարուան ընթացքում անտառը կորցրել էր համարեայ $\frac{2}{3}$. կարելոյ է ուշադրութեան առնել այն հանգամանքը, որ անտառի այս սոսկալի նուազումը տեղի է ունեցել մի ժամանակ, երբ անտառային

վարչութիւնը աւելի բարձր աստիճանի վերայ էր գտնւում. քան թէ առաջ եւ անտառապետները այստեղ ինչպէս ամէն տեւ, բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ էին: Բացի այդ՝ պետութիւնը արդէն մեծել էր կարգաւորութիւն անտառների շահագործման մէջ: Սակայն ստորին պաշտօնեաների շահասիրութիւնը եւ անբարեխղճութիւնը (երբեմն նոյն իսկ եւ անտառապետների), եւ ժողովրդի անգիտակցութիւնը իրենց աւերիչ դերը կարողացան կատարել: Մի անտառազուրկ երկրամասում 7717 դեսեատին անտառի կորուստը ինքն ըստ ինքեան մի մեծ ժողովրդական եւ պետական արհաւիրք է: Կարելի է ասել, որ սա վերջին կանանչ բիծն է կենդրոնական Հայաստանի մնայլ բարձրաւանդակի վերայ: Բայց արհաւիրքը չի սահմանափակւում այդ կորուստով միայն: Մերկացրած լեռնակողերը սկսեցին աւերուել անձրեւներից, սկսեցին առաջ գալ հեղեղներ «սելաֆներ», որոնք քերելով, քանդելով լեռները, սկսեցին աւերել եւ նրանց ստորոտներում գտնուող մշակուած տարածութիւնները՝ արտերը եւ մարգագետինները — մի արհաւիրք որ դեռ եւս լրացած չէ եւ շարունակւում է ընդարձակուել: Այս անտառապետութիւնը շրջապատող ազդարնակութիւնը (Դարաչիչագի եւ Աբարանի) վերին աստիճանի սակաւահող է եւ այդ հանգամանքը անտառի ոչնչացման զլիւսւոր պատճառներից մէկն է. անտառից մերկացած տարածութիւնները մասամբ արտերի են վերածւում, որոնցից սակայն կարողանում են օգտուել միայն մի քանի անդամ: Մշակութեան փորձերը արագացնում են միայն աւերման գործը. անձրեւը եւ նրանից կազմուող առուակները ի հարկէ աւելի արագ են քերում վարուած հողը, մերկացնելով աւազը եւ քարը՝ մեծացնում են հեղեղ նիւթը: Այժմ այդ երկու գաւառներում, ուր անտառների գոյութեան ժա-

մանակ նրանց ստորոտներում գտնուող զիւղերը դաղափար չունէին սեւաֆի մասին, հողերը ըստ կարգի վերածելիս (հողաբաժանութեան ժամանակ) նոր տերմին են աւելացրել — «սեւաֆտար», որի մէջ մտնում են ոչ միայն անտառից մերկացած տարածութիւնները, այլ ոչ սակաւ մասեր իրենց երբեմն ընտիր դաշտերից: Մի անգամ այս շրջանում, ուր գնացել էի՝ ի պաշտօնէ ստուգելու մի խումբ զիւղերի յանկարծակի կարկուտից եւ հեղեղից հասած վնասները, պետական օժանդակութիւն յառաջացնելու համար, տեսայ մի տարածութիւն, որ նման էր չորացած գետի ընդարձակ հունի, որի մէջ կային կղզիանման փոքրիկ կտորներ, մերթ հասկերով, մերթ գեղեցիկ կանաչով ծածկուած: Առաջի տպաւորութիւնը անհասկանալի էր: Դիւղացիք բացատրեցին, որ քարով եւ աւազով ծածկուած այդ ամբողջ տարածութիւնը՝ նախ քան հեղեղը մի շարք արտեր էին եւ մարդագետիներ:

Իմ հարցին — աւելի առաջ տեղի ունէի՞ն այսպիսի հեղեղներ, պատասխանեցին՝ «Ոչ, նոր ժամանակներում առաջ եկած երեւոյթ է, որը գնալով մեծացաւ»: Իսկ իմ միւս հարցին — պատճառն ի՞նչ է. պատասխանեցին՝ «Չգիտենք»:

Դիւղը եւ նրա դաշտերը ընդգրկող լեռան կողերի վերայ դեռ երեւացող հատուկ կտոր թփերը եւ ծառերի կոճղերը — նախկին անտառի մնացորդները, արդէն վերջին եւ լուռ վկաններն էին, թէ ինչպէս եւ ինչից առաջ եկաւ աւերիչ նոր երեւոյթը:

Դարաշիջադի անտառապետութեան պատմութիւնը բնութեան մի ահաւոր ողբերգութիւն է եւ աղաղակով վկայութիւն, թէ ինչպէս անգիտակից ազգաբնակչութիւնը կարող է ոչնչացնել երկրի մի անդին հարստութիւն եւ զորանով միաժամանակ աւերել սեփական գոյութեան հիմքը: Ի հարկէ ոչ մի բացատրութիւն չե կարող բաւարարութիւն տալ, թէ այդ կործանարար վերաբերմունքը հետեւանք է

հողասակաւութեան, փայտի կարիքի, աղքատութեան, որ դրդում է շահագործել անտառը ապուստ հայթայթելու համար, ինչպէս ոչ մի արդարացում չե կարող լինել, եթէ մէկը իւր տան տանիքը քանդի վառելիքի եւ իւր այլ պիտոյքների համար:

Այս անտառապետութեան վիճակը բնորոշ է հայկական անտառների համար, որոնք կամ նոյն դրութեան մէջ են, կամ մօտենում են նոյն դրութեան: Սակայն կան աւելի տուժած անտառներ, արդէն անհետացող, ինչպէս օրինակ Գառնի եւ Վեդի գետերի հովիտներում:

Սորանից մի երկու կամ երեք տասնեակ տարի առաջ ոչ դեռ չէ կարող երեւակայել, թէ Փամբակի եւ Լոռու հսկայական անտառները կարող էին գտնուել ոչնչացման վտանգի մէջ: Այսօր դա փաստ է: Փամբակը, որը բարձր, մեծ մասամբ սրաւոր լեռների մէջ ընկած մի երկայն եւ նեղ հովիտ է, վաղուց արդէն կիսաւեր էր նոյն չարիքի հետեւանօք: Բայց նրա կէսը՝ Ղարաքիլիսից սկսած մինչեւ Դիլիճան ամբողջովին թաղուած էր հսկայ անտառների մէջ, որոնք գնալով խառնում էին նոյնանման անտառների Դիլիճանի հովտում: Այժմ արդէն այդ անտառները խիստ ցանցառացած են, սեւ տեւ, վերացած եւ տարածութեամբ խիստ կրճատուած: Այստեղ եւս սկիզբն են առել հեղեղներ, որոնք հետզհետէ աճում են եւ որոնց թափը գնալով ուժեղանում է: Համալսելիքների ճոխ եւ գեղեցիկ մարդագետիները արդէն տեւ տեւ պատառոտուած են նոր առաջ եկած հեղեղներից: Այս կէտում սա դեռ սկիզբն է գալիք անապատի:

Ինչպէս ասացինք՝ մի ժամանակ խիտ անտառապատ Լոռին աւերմունքի սոսկալի տեսարաններ է ներկայացնում: Շատ արագ գնում է նմանուելու կենդրոնական Հայաստանի բնական բուսականութիւնից զուրկ դաւառներին: Երկաթուղին անցնելուց յետոյ, դեռ սկզբի տարիներում Սանահնի նեղ

եւ ձիգ հովիտը, իւր ճոխ անտառային բուսականութեամբ, դրա շնորհիւ եւ գեղեցկութեամբ բնութեան մի սքանչելի տեսարան էր կազմում եւ ճանապարհորդների զմայման առարկայ էր: Նրան այժմ ճանաչել չի կարելի: Կալազիրան կայարանից սկսած դէպի հիւսիս սկսել է մերկանալ սոսկալի արագութեամբ շնորհիւ մարդի աւերիչ ձեռքի, որին նախ քան երկաթուղին անմատչելի էր: Որովհետեւ ձորը կազմող լեռները երկուստեք սրակոլ են, կարելի է եղծակացնել, թէ բնութեան ինչ աւերմունք է սկսուած: Ոչ միայն բնական մի մեծ հարստութիւն ջնջւում է անվերանորոգելի, նոյն իսկ երկաթուղու գիծը զգալի տարածութեամբ հեղեղների վտանգի տակ է ընկել: Եւ հեռու չէ ժամանակը, որ պետութեան կողմից հսկայական ծախքեր հարկաւոր կը լինին՝ արուեստական կառուցումներով պաշտպանել այդ գիծը: Մերկացրած մասերում դեռ հատ հատ մնացած հսկաները ցոյց են տալիս, թէ անտառային բուսականութեան որպիսի նպաստաւոր վայր է անապատ դառնում:

Անտառների ոչնչացման անմիջապէս հետեւող հեղեղները, որոնց թափը կախուած է մերկացող լեռների մակերեւոյթի կազմից, շնորհիւ անընդհատ ոչնչացման, գնալով աճում են, գնալով մեծանում են. շատ տեղերում, բացի դաշտերի աւերումը, սկսել են սպառնալ բնակավայրերի գիւղերի, նոյն իսկ քաղաքների, որոնք շինուած են եղել երբեմն անտառախիտ իսկ այժմ մերկացող լեռների գոգում: Վերոյիշեալ Դարաչէչագի անտառապետութեան սահմաններում ես գիտեմ երկու գիւղեր լեռան հակառակ կողերի ստորոտներում, որոնք յորդառատ անձրեւ ժամանակ շտապում են գիւղից փախչել մերձակայ բլուրները:

Այս արհաւիրքի տարբեր աստիճանի սպառնալիքի տակ գտնուող գիւղեր սոսկալ չեն այս շրջանում:

Հազուադիւս չեն նմանօրինակ երեւոյթներ ամբողջ Անդրկովկասում: Բայց ամենա-

ահաւորն է այն վտանգը, որին բազմիցս ենթարկւում է Նուխի քաղաքը: Իւրաքանչիւր տարի զարնան Անդրկովկասեան բոլոր ազգութիւնների ներկայացուցիչներա Պետական Դումայում՝ բոթաբեր հեռագիրներ էինք ստանում Նուխուց քաղաքի աւերման մասին հեղեղից: Օգնութիւն էին խնդրում Պետութիւնից, այն է մեծաքանակ դումար, մեքենայական կառուցումներով անվտաղ ընթացք տալ հեղեղին «սէլին», որը մի զանգուած է, պարունակելով երբեմն եւ հսկայ քարեր, նոյն իսկ ժայռեր:

Մարդու ձեռքերով կատարուող աւերմունքից հետեւող երեւոյթի տեսարանը աւելի ազդու է եւ պատճառը ակներեւ, երբ հովիտը շրջապատող լեռները ամբողջովին մերկացրած չեն, դրանց մի մասը դեռ ծածուած է անտառներով: Մինչդեռ մերկ լեռնակողերում յորդառատ անձրեւի կամ զարնանը ձեան հալման ժամանակ բոլոր հեղուկը լեռը քերելով, նրա ծալքերում առուակներ կազմելով եւ նրանց միացմամբ հեղեղներ, երկիրը աւերելով դուրս է գնում կորչում անօգուտ, միեւնոյն հովիտում միեւնոյն ժամանակ անտառապատ լեռնակողերից ջուր չի դուրս գալիս եւ ամբողջ հեղուկը ծծւում է երկրում: Դորանով անտառը ոչ միայն պաշտպանում է երկրի մակերեւոյթը քայքայումից, այլ միաժամանակ ինքն է ամբարում իւր գոյութեան եւ աճման համար անհրաժեշտ ջուրը: Բայց որովհետեւ ծծուած հեղուկը միշտ գերազանց է այն քանակից, որը սպառւում է ինքը անտառը, մեծագոյն մասը գնում է ուժեղացնելու աղբիւրների աւազանները, ինչպէս նկատեցինք վերը: Սորանով չի սահմանափակւում անտառի բարերար ազդեցութիւնը: Նրանից կախում ունի եւ կլիման: Անտառից բարցրացող գոլորշիները շատ անգամ կատարում են ամպերի վերաբերմամբ այն մի կաթիլ ջրի դերը, որը աւելանալով բաժակը լրում է: Շատ անգամ այդ աւելացած գոլորշին է, որ ամպը դարձնում է անձրեւաբեր: Հայաս-

տանի այն մասերում, ուր անտառները վեր-
ջանալու վրայ են, նկատելի է անձրեւի
պակասիւր տարուայ տաք ժամանակին,
բուսականութեան ջրի ամենամեծ կա-
րիքի ժամանակ: Յայտնի է, որ շողը
նուազեցնում է ամպը: Անտառի գոլորշին
դալիս է նրան թանձրացնելու. պարզ է,
որ պիտի լինին վայրկեաններ, երբ այդ
աւելացող գոլորշին վճռողական դեր է կա-
տարում եւ ամպը առանց դրան կը մնայ
ամուլ:

Վրաստանը շնորհիւ իւր բարեխառն կլի-
մայի եւ անձրեւների համեմատաբար առա-
տու թեան՝ տարուայ նաեւ տաք շրջաններին
անտառների աճեցողութեան համար աւելի
նպաստաւոր պայմանների մէջ է գտնուում:
Բայց այս տեղ եւս անմիտ եւ անխնայ շա-
հագործումը կատարել է իւր աւերիչ դերը՝
այդ ի բնէ անտառախիտ երկրում: Ինքը,
կովկասի մայրաքաղաքը արդէն շրջապա-
տուած է անսպասով, որը գնալով ընդար-
ձակում է: Սակայն այդ արուեստօրէն
ստեղծած անապատի շուրջը բոլոր կողմերում
նկատելի են անտառի հետքեր: Բոտանիկեան
այգու ետեւի զուգընթաց ձորերում դեռ
կան թուփեր, որ միշտ մնացորդներ են ան-
տառների: Բաղաքի արեւելեան կողմը բար-
ձրացող մերկ բլուրների խորշերում նմա-
նապէս դեռ մնացել են թփեր որոնք օր ըստ
օրէ անհետանում են, դաստապարտուած այլ
եւս չվերանորոգուելու. որովհետեւ այդ խո-
տաղուրի հողամասերի տէրերը զանց չեն առ-
նում եւ այդ մասերը շահագործելու, չնչին
վարձով՝ կապալով տալով հօտատէրերին:
Եթէ ներկայ դէպքում Թիֆլիսի քաղաքային
վարչութիւնը ինքը վճարէր այդ անարժէք
վարձագինը, եւ ինքն իրեն թողնուէր բնու-
թիւնը, ժամանակի ընթացքում կ'աճէր եւ
կ'ընդարձակուէր այդ թանկագին բուսակա-
նութիւնը: Ուշ չէ եւ այժմ: Մենք առիթ
ունեցանք յիշեալ վարչութեան ուշադրու-
թիւնը հրաւիրելու այդ հանգամանքի վե-
րայ (1915 թ. կովկասեան գեամովոյա-

կան ժողովում): Բայց... բայց Թիֆլիզը
Յիւրիխ չէ:

Բաղաքի վերոյիշեալ շրջապատի ան-
տառային բուսականութիւնը ոչնչացրուած է
վաղուց: Մերձակայքում գտնուող կենդանի
մնացած անտառների ոչնչացումը կատարուեց
նոր ժամանակներում, շարունակում է եւ
այժմ: Արեւմուտքից իւր մերկ եւ լերկ կո-
ղերով Թիֆլիզը ընդգրկող Դաւթի լեռան
ետեւից մի երկու մղոն չանցած սկսում են
անտառներ, որոնք ջնջւում են օր ըստ օրէ:
Ժողովութի ուղղութեամբ մեկնող լանջը՝ քա-
ղաքին շատ մօտ դեռ խիտ ծածկուած է
թփերով, որոնք կազմում են մի փոքր հեռու
դեռ կանգուն անտառների շարունակու-
թիւնը, որոնք եւս հետզհետէ վեր են ած-
ւում նոյն վիճակի:

Այդ ընդարձակ թփերը ծառատուն-
կեր են, որոնք անընդհատ ջարդուելով եւ
անասուններից կրծոտուելով թփանում են:
Եւ անշուշտ կը ծառանային, եթէ թողնուէին
սոսկ միայն բնութեան կամքին: Եւրոպայում
մեծ քաղաքների մօտենալիս բուսականու-
թիւնն է ընդարձակում, իսկ Ասիայում
եւ նրա հարադատ մասնիկում Անդրկով-
կասում՝ անապատը: Հարկաւոր է յիշել
միայն Պարիսը եւ Վիեննան: Նոյն Թիֆլիզից
մի տասնեակ մղոն հեռու գտնուող Նախշիւր
Գորիի եւ Լաստիսցիսէի անդնդանման ձորերը
կողէ կող անտառապատ էին. այստեղ ջնջ-
ւում են արդէն անտառների վերջին մնա-
ցորդները եւ երկիրը սկսել է մեռեալ բնու-
թեան կերպարանք ստանալ, որովհետեւ
մերկացրած տարածութիւնները շնորհիւ
սրահայացութեան՝ ոչ մի մշակութեան պի-
տանի չեն: Մցխեթը շրջապատող լեռները
ըստ մեծի մասին մերկացած են, եւ տեղ
տեղ նախկին անտառը փոխարինել են փշոտ
զաճաճներ: Իսկ Ռազմավիրական ճանա-
պարհի երկու կողմը ընկնող հսկայ եւ սրա-
կող լեռների միայն դժուարամատչելի կետե-
րում երեւում են նախկին անտառների մնա-
ցորդները: Անդրկովկասի մարդարիտը կախ-

էթը, ուր շատ տեղերում խաղողի այգին եւ անտառը դեռ սահմանակից են, աստիճանաբար՝ մօտենում է աւերման նոյն վիճակին, որի մէջ դտնւում են Անդրկովկասի գաւառների մեծագոյն մասը:

Վրաստանում անտառները ըստ մեծի մասին պատկանում էին ազնուականութեան եւ վերջինս չէր նայում նրանց վերայ ինչպէս տնտեսութեան մշտական աղբււրի, որը պիտի շահագործել, ապահովելով նրա վերանորոգութիւնը, այլ իւրաքանչիւր սերունդ ձգտում էր կեղեքել անտառը որքան կարող է, կարծես մտածելով — մեզանից յետոյ թէկուզ ջրհեղեղ:

Վրաստանը դեռ զգալի տարածութեամբ անտառապատ է, երբեմն նոյն իսկ դաշտային մասերում, ինչպէս օրինակ Ալազանի հովիտում, եւ այդ կողմից չի գտնւում նոյն տաղնապի մէջ ինչպէս կենդրոնական Հայաստանը. բայց նրանում եւս շատ տեղեր խորը խոցուած է բնութիւնը:

Այժմեան Ատրպատականի հսկայ դաշտը եղբորդ լեռները տարբեր վիճակի մէջ են անտառային բուսականութեան կողմից. կան դեռ վերին աստիճանի անտառախիտ մասեր, մանաւանդ Լենկորանի գաւառում, կան եւ սաստիկ տուժած, ինչպէս Շամախի գաւառում, որ աչքի է ընկնում իւր մեղմ կլիմայով ուր վայրի բուսումն է եւ նուաճ: Առանձնապէս զգալի է այն տեսարանը, որ ներկայացնում են Շամախու բարձրաւանդակը սկսող՝ Շարաղիլ լեռան լանջերին գտնուող անտառային մնացորդները, որոնց կատարեալ ջնջումը, ըստ երեւոյթին, հեռու չէ:

1910 թ., երբ Նախարարութեան աջակցութեամբ եւ ձեռնարկել էի ստուգել անտառների վիճակը Անդրկովկասում, Ղազախի անտառապետը (այս գաւառի լեռնային մասը այժմ միացած է Հայաստանի հասարակապետութեան) իւր գործին նուիրուած մի մասնագէտ երիտասարդ, նկարագրելով կատարուած աւերմունքները, ցոյց

տուեց լեռնահովիտներ, ուր անտառային բուսականութեան ոչնչացման հետեւանօք աղբիւրները արդէն լռել էին:

Նոյն իսկ անտառախիտ եւ մշտադալար Բաթումի նահանգի բնութիւնը տեղ տեղ կրում է իւր վերայ աւերիչ ձեռքերի հետքերը ինչպէս Արդուինը եւ շրջակայքը ուր անմոռէն սրակող լեռը մերկացրել են եւ յորդառատ անձրեւի ժամանակ յառաջ եկոյ հեղեղը սկսել է աւերել տեղ տեղ նոյն իսկ քաղաքամասեր ու այգիներ:

Անկուլտուրական երկրներում անտառը ընդհանրապէս աւելի սաստիկ է տուժում, մանաւանդ այն տեղերում, ուր ամէնից աւելի պիտի խնամքի առարկայ լինէր: Անդրկովկասում մինչեւ օրս՝ զիւղական համայնքների եւ քաղաքների մօտիկութիւնը շարունակում է մահաբեր մնալ անտառների համար:

(Ըրբեմն էլ ինչ):

Յ. ՍԱՀԱԹԵԼԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ ՅԵՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Ա.

Կրկնանուն ածականներ:

Ցանցառ չէ դասական մատենագրութեան մէջ գործածութիւնը այն ածականներու, որոնք՝ փոխանակ իրենց սեփական շշանակութեամբը գոյականներ որակելու, մասնաւոր ու խնամուած նախասիրութիւն մը ցոյց կու տան առնթրի ալ մաստ գոյականը կցելու անգամ մըն ալ իրենց ծայրը, ու այսպէսով կը ջանան կարծես ներքին աղբիւս մը հաստատել ածականի եւ գոյականի միջեւ: Հետաքրքրական երեւոյթ մը, որ — որքան կը ներեն բնագրական համեմատութիւնները գուշակել — հայերէն քերական